

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրատնտեսական և ֆինանսական գործունեությունը բնութագրող առանցքային նշանակություն ունեցող ցուցանիշներից մեկն է համարվում ֆինանսական արդյունքը, որն արտահայտվում է շահույթի կամ վնասի տեսքով:

Շահույթը դասվում է ամենաբարդ տնտեսական ցուցանիշների շարքին, առանց որի ուսումնասիրման հնարավոր չէ ցուցաբերել գիտական մոտեցում այնպիսի խնդիրների լուծման շուրջ, ինչպիսիք են՝ արտադրության արդյունավետության բարձրացումը, ֆինանսական կայունության ապահովումը, եկամուտների և ծախսերի օպտիմալ կառավարումն ու աշխատանքային կոլեկտիվի համար մոտիվացիոն պայմանների ստեղծումը:

Նոր տնտեսական ֆորմացիայի և տնտեսական կարծրատիպերի պայմաններում առավել քան կարևորվում է շահույթի ուսումնասիրման հարցը:

Շահույթի մեկնաբանման առաջին փորձն իրականացվել է մերկանտիլիստների կողմից XVI-XVII դարերում: Ըստ նրանց՝ շահույթն առաջանում է ներքին առևտրում, երբ մարդիկ ապրանքն արտասահմանում վաճառում են ավելի քանկ գնով, քան այն ձեռք են բերել: Այս տեսության հիմնադիրներն են Տ. Մեն, Ջ. Լոկը, Բ. Կանտիլյոն:

Ա. Սմիթը և Դ. Ռիկարդոն շահույթի աղբյուրը տեսնում էին արտադրության գործընթացում: Սմիթը նշում էր, որ «այն արժեքը, որը բանվորների կողմից ավելացվում է օգտագործվող նյութերի արժեքին, տրոհվում է երկու մասի, որից մեկը գնում է նրանց աշխատավարձի վճարմանը, իսկ մյուսով վճարվում է նրանց ձեռնարկատիրոջ շահույթը»¹: Այսպիսով, նրանք շահույթը դիտարկում էին որպես ձեռնարկատիրոջ կողմից վարձու աշխատողների աշխատանքի արդյունքից հանուրդ/պահում: Իր հերթին Ռիկարդոն ձևակերպեց մի օրենք, համաձայն որի աշխատավարձի մեծությունը և շահույթը հակադարձ համեմատական են միմյանց: Նա գրում էր. «... շահույթը մեծ կամ փոքր կլինի կախված նրանից, թե ինչքան բարձր կամ ցածր է աշխատավարձը»:

Կ. Մարքսը, վերլուծելով բուրժուական քաղաքական տնտեսագիտության դասականների շահույթի մասին ունեցած տեսությունների առավելությունները և թերությունները, եզրահանգեց. «... քանի որ հավելյալ արժեքը, այսինքն հավելյալ աշխատանքը, իրենից ներկայացնում է վճարված աշխատանքի և ապրանքի վրա կատարված ու նրանում ներդրված աշխատանքի տարբերությունը, հետևաբար, Ա. Սմիթը աշխատանք ասելով հասկանում էր համընդհանուր մի կատեգորիա, որի մի առանձին ճյուղն են հանդիսանում շահույթը և հողի ռենտան»²:

Մարքսը նշում էր, որ Դ. Ռիկարդոն շահույթը էր հավելյալ արժեքը նրա առանձին դրսևորումների հետ, ինչպիսին է օրինակ շահույթը, և որ նա անկարող էր բացատրել հավելյալ արժեքի վերածումը շահույթի: Մյուս բոլոր տնտեսագետների նրան Ռիկարդոն երբեք չի ուսումնասիրել հավելյալ արժեքը որպես այդպիսին, այսինքն, անկախ նրա առանձին դրսևորումներից, ինչպիսիք են՝ շահույթը, հողի ռենտան և այլն: Հավելյալ արժեքի նորմային վերաբերող օրենքները նա ուղղակիորեն միավորում է շահույթի նորմաների մասին օրենքներին:

¹ Рикардо Д. Начало Политической экономии и податного обложения. — М., 1964.

² Маркс К. Капитал. Критика политической экономии. Т.3. — Кн. 3. — Процесс капиталистического производства, взятый в целом. Ч. 1. — М., 1985. — 508 с.

Մարքսի՝ շահույթի մասին տեսության առանձնահատկությունն այն է, որ նա շահույթի առաջացման աղբյուր էր համարում վարձու բանվորների չվճարված աշխատանքը: Մարքսիզմի տեսանկյունից «... շահույթն իրենից ներկայացնում է հավելյալ արժեքի միայն երկրորդային, ածանցյալ և փոխարկված ձևը՝ բուրժուականը, որում ջնջվել են նրա առաջացման հիմքերը»¹:

Եթե շահույթը դիտարկում ենք որպես կապիտալի հավելված (կապիտալից ստացվող հասույթ), ապա կարևորվում է այդ հասույթի առաջացման հարցը: Ուստի, կապիտալի և շահույթի տեսությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Այս գաղափարն իր զարգացումն է գտել Օ. Բեմ-Բավերկի աշխատություններում²:

Շահույթի դիտարկումը որպես եկամտի առանձին, ինքնուրույն ձև, որը տոկոսադրույթն է, այլ ձեռնարկատիրոջ ծառայությունների դիմաց վճար, խնդիրը տեղափոխում է ձեռնարկատիրական գործունեության ուսումնասիրման ոլորտ: Այդ տեսությունը զարգացրել է Ի. Շումպետերը: Տեսության համար հատկանշական է շահույթի կազմում կապիտալի տոկոսադրույթի և տնտեսվարող սուբյեկտի շահույթի, որպես հատուկ կանոնների ենթարկվող ինքնուրույն կատեգորիայի, առանձնացումը: Այս դրույթը հետագայում հիմնավորվեց Ֆ. Ուեկերի, Յու. Բ. Կլարկի աշխատություններում: Տնտեսվարող սուբյեկտի շահույթի մասին տեսության մանրակրկիտ բնորոշումը տրվել է Շումպետերի կողմից. «Տնտեսվարող սուբյեկտի շահույթը արտադրական գերաժախսի ավելցուկն է: Ձեռնարկատիրոջ տեսանկյունից, դա հասույթի և ծախսերի տարբերությունն է»³:

Ֆ. Նայտը մշակում է մեկ այլ գաղափար, համաձայն որի շահույթի առաջացումը կապակցվում է ձեռնարկատիրական գործունեության հետ, սակայն հաշվի առնելով տնտեսական ռիսկը: Նայտը սահմանափակվում է իդեալական մրցակցության պայմաններով և հաշվի չի առնում մոնոպոլիաների իրական, արմատական դերը: Մրանով է պայմանավորված «մոնոպոլ մրցակցության տեսությունների զարգացումը, որոնք քննարկվում են Դ. Ռոբինսոնի, Է. Չեմբերլինի աշխատություններում»:

Ժամանակակից արևմտյան տնտեսագետները, որպես կանոն, շահույթը սահմանում էին բարգավաճման տեսանկյունից, այսինքն՝ որպես տնտեսվարող սուբյեկտի բարգավաճում տվյալ ժամանակահատվածում: Այսպես, Հիքսի կարծիքով. «...գործնականում շահույթի հաշվարկման նպատակը կայանում է նրանում, որ մարդիկ պատկերացնեն այն գումարի մեծությունը, որը նրանք կարող են ծախսել իրենց կարիքների համար՝ չվտանգելով իրենց նյութական ապահովությունը: Հիմք ընդունելով այդ գաղափարը՝ կարելի է ասել, որ այս կամ այն մարդու եկամուտը/շահույթը/ պետք է հաշվարկել որպես այն առավելագույն գումարը, որը նրանք կարող են ծախսել շաբաթվա ընթացքում, այն պայմանով, որ նրա նյութական վիճակը շաբաթվա վերջում չի վատթարանա շաբաթվա սկզբի համեմատությամբ»⁴:

Չնայած տվյալ սահմանման մեջ խոսքը անհատական մոտեցման մասին է, շահույթը, որպես բարեկեցության գաղափար կիրառելի է ցանկացած տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ:

Արևմտյան հաշվապահները, իրենց հերթին, մի փոքր այլ մոտեցում են ցուցաբերում շահույթի նկատմամբ: Օրինակ, Ամերիկյան հաշվապահների ինստիտուտի մասնագետների կարծիքով շահույթը մի մեծություն է, որը ստացվում է հասույթից կամ եկամտից իրացված արտադրանքի ինքնարժեքի, այլ ծախսերի և կորուստների պահումից հետո: Իսկ Ամերիկյան վկայագրյալ բարձրակարգ հաշվապահների ինստիտուտի մասնագետները գտնում են, որ զուտ շահույթը (զուտ վնասը) հաշվետու ժամանակահատվածում ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցում կամ նվազեցում է:

¹ Маркс К., Энгельс Ф. Соч. – 2-е изд. – Ч. 2. – С. 92.

² Бем-Баверк О. Основы теории ценности хозяйственных благ / Австрийская школа политической экономии. – М.: Экономика, 1992.

³ Шумпетер И. Теория экономического развития. – М.: Прогресс, 1982. – 539 с.

⁴ Хикс Дж. Стоимость и Капитал. – М.: Прогресс, 1993. – 488 с.

Վերը նշված սահմանումները նկարագրում են տնտեսական գործունեությունից ստացվող շահույթի գաղափարի նկատմամբ մոտեցումը, որը հիմնվում է շուկայական տնտեսության սուբյեկտների եկամուտների և ծախսերի համեմատման վրա: Սակայն տվյալ մոտեցումը ավելի նեղ սահմանում է, քան այն սահմանումը, որը տալիս են տնտեսագետները շահույթի առնչությամբ: Ուստի, տարբեր երկրների բազմաթիվ գիտնականների կողմից փորձեր են արվել ընդլայնելու շահույթի գաղափարի նկատմամբ հաշվապահական մոտեցումները: Օրինակ՝ Էդվարդսոնը և Բելլը առանձնացրել են շահույթի չորս տեսակ.

- տնտեսական գործունեությունից ստացվող ընթացիկ շահույթ (իրացումից ստացվող հասույթի գերազանցումն է արտադրական ծախսերի արժեքից և իրացված արտադրանքի ինքնարժեքից),
- իրացման հետ կապված ծախսերի տնտեսում (առաջանում է տվյալ ժամանակահատվածում առկա ակտիվների գների բարձրացման դեպքում),
- իրացված արտադրանքի գծով ծախսերի տնտեսում (իրացված արտադրանքի ինքնարժեքի և ընթացիկ վաճառքի գնի տարբերություն),
- ակտիվների օտարումից ստացված օգուտները (երկարաժամկետ ակտիվների լուծարման ժամանակ ստացված հասույթի տարբերությունն է իրացման և հաշվեկշռային կամ փաստացի ինքնարժեքի նկատմամբ):

Մ.Ռ. Մետյուսի և Մ.Խ. Պերերայի կարծիքով. «...շահույթի այս չորս տեսակների մասին տեղեկությունները կարող էին հանդիսանալ «բարգավաճման» լավագույն ցուցանիշը և արտադրական կազմակերպության գործունեության արդյունքների վերլուծության համար ավելի լայն տեղեկատվություն կարող էին տալ: Շահույթի նկատմամբ նման մոտեցումը ավելի ընդգրկում է և ավանդական մոտեցման համեմատությամբ՝ էական քայլ է դեպի առաջ, քանի որ պահանջում է հաշվետվությունների ներկայացում տվյալ ժամանակահատվածի ընթացքում ունեցվածքից ստացվող օգուտների և կորուստների մասին՝ ենթադրելով, որ դա կընդլայնի ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկությունների ծավալը»¹:

Մեր երկրում շահույթի կատեգորիայի նկատմամբ մոտեցումը ոչ միշտ է միանշանակ եղել: Տնտեսական մեխանիզմների բարեփոխումը՝ ուղղված շուկայական տիպի տնտեսության ստեղծմանը, առաջ քաշեց շահույթի ցուցանիշի նկատմամբ մոտեցման փոփոխություն՝ մեծացնելով նրա դերը տնտեսական մեխանիզմներում: Շուկայական հարաբերությունները նպաստում են տնտեսական գործունեության զարգացմանը և մեծացնում են նրա արդյունավետությունը: Շահույթը արդյունավետ գործունեության արդյունք է, և դրանով իսկ ստեղծում է կազմակերպության հետագա գործունեության որոշակի երաշխիքներ, քանզի շահույթը և նրա կուտակումը հնարավորություն են տալիս սահմանափակելու ու հաղթահարելու արտադրության և շուկայում արտադրանքի իրացման հետ կապված տարբեր ռիսկեր:

Այսպես, Մ.Բ. Վալտերը և Մ.Լ. Լիշանսկին շահույթը պատկերացնում էին ոչ թե պարզապես հասույթի մի տարր, այլ որպես տնտեսական ամենաբարդ կատեգորիաներից մեկը, որի ետևում թաքնվում են ապրանքի արտադրությանը, գնային հարաբերություններին, ապրանքի շարժին և դրամական միջոցներին ներհատուկ խորքային կապերը²: Նրանց կարծիքով շահույթը կատարում է երկու կարևոր գործառույթ՝

Առաջին. բնութագրում է գործունեության վերջնական ֆինանսական արդյունքները, դրամական կուտակումների մեծությունը, ինչպես նաև աշխատանքի առավել ընդհանրական տնտեսական ցուցանիշ է, տնտեսվարման արդյունավետության չափորոշիչ: Նրանում արտացոլվում են գործունեության բոլոր ճյուղերը՝ աշխատանքի արտադրողականությունը, հիմնական

¹ Метьюс М. Р., Перера М.Х.Б. Теория бухгалтерского учета: Пер. с англ. : Под ред. Я. В. Соколова, И. А. Смирновой. – М.: Аудит, ЮНИТИ, 1999. – 663 с.


² Вальтер С. Б., Лишанский М. Л. Прибыль сельскохозяйственных предприятий, ее распределение и использование. – М.: Агропромиздат, 1990. – 240 с.

արտադրական միջոցների օգտագործման աստիճանը, տեխնիկայի և տեխնոլոգիայի, աշխատանքի կազմակերպման մակարդակը, ինքնարժեքը, իրացված արտադրանքի որակը և ծավալը:

Երկրորդ. շահույթը կազմակերպությունների արտադրական և սոցիալական զարգացման, դեպի բյուջե կատարվող վճարումների հիմնական աղբյուրն է: Նրա օգնությամբ շահագրգռվածություն է առաջանում բարձրացնել գործունեության արդյունավետությունը, լիարժեք օգտագործել ներքին ռեսուրսները նպատակների բարեհաջող իրականացման համար:

Շահույթի գործառույթների ուսումնասիրությունը նպաստում է, որպեսզի կատարելագործվեն տնտեսվարող սուբյեկտների գործունեության տնտեսական խթանման մեխանիզմները, ինչը հատկապես կարևոր է շուկայական տնտեսության պայմաններում: Շահույթից ելնելով գնահատվում է տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունների տնտեսական միջոցառումների արդյունավետությունը: Ներկա տնտեսական զարգացման և տնտեսվարող սուբյեկտների իրական ինքնուրույնության ձևավորման պայմաններում շահույթը նոր բովանդակություն է ստացել: Ի.Ա. Բլանկը հաստատում է, որ շահույթը՝ շուկայական տնտեսության հիմնական շարժիչ ուժը, ապահովում է պետության, սեփականատերերի և ընկերությունների աշխատակիցների շահերը¹: Նրա կարծիքով շահույթը ձեռնարկատիրոջ կողմից կապիտալ ներդրումների արդյունքում դրամական արտահայտություն ստացած զուտ եկամուտն է, որը բնութագրում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ռիսկի դիմաց ստացված վարձահատույցը, և որը ընդհանուր եկամտի և ծախսերի տարբերությունն է: Ներկայումս շահույթը խաղում է բազմակողմանի դեր և բնութագրվում է իր տարբեր դրսևորումներով (գծանկար 1):

Ներկայումս շահույթի մեծության վրա ազդում են ոչ միայն աշխատանքային կոլեկտիվի նվաճումները, այլ նաև վարչակազմի կարողությունը՝ վարպետորեն օգտագործել գործող նորմատիվ փաստաթղթերում առկա հաշվապահական ընթացակարգերի կարգավորման հնարավորությունները:



Գծանկար 1. Կազմակերպության շահույթի դերը շուկայական տնտեսության պայմաններում

Մ.Ի. Կուտերի կարծիքով նման կարգավորող ընթացակարգերի թվին են պատկանում՝

- երկարաժամկետ ակտիվների մաշվածքի /ամորտիզացիայի/ հաշվառման մեթոդի կիրառումը,
- կանոնադրական կապիտալում մասնակիցների ներդրումների գնահատման կարգը,
- արտադրական պաշարների գնահատման մեթոդի ընտրությունը,

¹ Бланк И. А. Управление прибылью. – Киев: Ника – Центр, 1998. – 544с.

- պահուստների ստեղծման կարգը՝ անհուսալի պարտքերի և արժեզրկված արժեթղթերի գծով,
- եկամուտի ճանաչման մեթոդի ընտրությունը /դրամարկդային կամ սեփականության իրավունքի փոխանցման/
- հաշվետու ժամանակահատվածում որոշ տեսակի ծախսերը որպես ծախս համարելու կարգը,
- վերադիր ծախսերի /անուղղակի կերպով բաշխվող/ կազմը և բաշխման կարգը¹:

Ներկա պայմաններում, երբ շահույթը պետական բյուջեի համալրման, արտադրության ընդլայնման, սեփականատերերի վարձահատուցման, սոցիալական խնդիրների լուծման միակ աղբյուրն է, հաշվապահական հաշվառման կարևորագույն խնդիրն է դառնում դրական ֆինանսական արդյունքի հաշվարկման և բաշխման հավաստիության ապահովումը:

Ջբաղվելով տվյալ տնտեսագիտական կատեգորիայի խորացված ուսումնասիրությամբ՝ Յ.Վ. Սոկոլովը նշում է. «... համարվում է, որ շահույթը անհրաժեշտ է 1. ֆիրմայի գործունեության արդյունավետության գնահատման համար (որքան մեծ է շահույթը, այնքան լավ է աշխատանքը), 2. հարկման բազայի մեծության որոշման (ինչքան փոքր է շահույթը, այնքան փոքր են հարկային պարտավորությունները), 3. ֆիրմայում միջոցների ներդրման, նրա բաժնետոմսերի գնման հետ կապված որոշումների կայացում (ինչքան մեծ է շահույթը, այնքան շահեկան է պահել վերջինիս բաժնետոմսերը), 4. բաժնետեր-սեփականատերերի նպատակների իրականացում (ինչքան մեծ է շահույթը, այնքան բարձր է նրա վարկանիշը, և հարուստ է սեփականատերերը)»²:

«Ֆինանսական արդյունք» /շահույթ/ հասկացության վերլուծությունը, Յ.Վ. Սոկոլովի կարծիքով, առաջ է բերում երեք հնարավոր մեկնաբանություն: Նրա ամենաակնհայտ (հաշվապահական, վիճակագրական) մեկնաբանությունը հետևյալն է. «... ֆինանսական արդյունքը (շահույթը) հանդիսանում է տվյալ հաշվետու, ժամանակաշրջանում կազմակերպության կապիտալի (սեփականատիրոջ կողմից ներդրված միջոցների) աճը: Համապատասխանաբար, վնասը սահմանվում է որպես դրա փոքրացում»:

Ջարգացնելով տվյալ սահմանումը՝ հեղինակը նշում է այդ միջոցների հնարավոր աճի հետևյալ պատճառները՝ 1. կազմակերպության տնօրինության ներքո անհատույց միջոցների ստացում, 2. գոյություն ունեցող ակտիվների արժեքի աճ, 3. սեփականատերերի կողմից լրացուցիչ ներդրումների իրականացում, 4. ծախսերի կապիտալացում, 5. կազմակերպության տնտեսական գործունեության ընդլայնում:

Գիտնականի կարծիքով միայն հինգերորդ պատճառը տեղիք չի տա քննադատության, և միայն դա կրերի ֆինանսական արդյունքի մեկ այլ հայեցակարգի: Ֆինանսական արդյունքը /շահույթը/ ֆիրմայի եկամուտների և ծախսերի տարբերությունն է: Այդ տարբերությունը կարող է դրական լինել, և այս դեպքում խոսքը շահույթի մասին է և կարող է բացասական լինել՝ որակվելով որպես վնաս: Այսպիսով, Յ.Վ. Սոկոլովի կարծիքով վնասը կարելի է դիտարկել որպես շահույթ՝ սակայն բացասական նշանով: Այստեղից առաջ է գալիս ևս մի մոտեցում, համաձայն որի եկամուտները դեպի կազմակերպություն եկող ակտիվների հոսքն են, իսկ վնասները՝ կազմակերպությունից դուրս եկող ակտիվների հոսքը: Շահույթը /վնասը/ այն տարբերությունն է, որը ձևավորվում է նրանց միջև: Այս երկու հաշվապահական մոտեցումների համաձայն՝ ֆինանսական արդյունքը պայմանավորված է ակտիվի մեծացմամբ կամ եկամուտների և ծախսերի տարբերությամբ:

Ֆինանսական արդյունքի երրորդ մեկնաբանությունը սկիզբ է առնում Ի. Ֆիշերի աշխատություններում: Նա նշել է, որ հաշվապահի կողմից հաշվարկված շահույթը տնտեսագիտական

¹ Кутер М. И. Бухгалтерский учет: основы теории. – М.: Экспертное бюро, 1997. – 496 с.

² Соколов Я. В. Основы теории бухгалтерского учета. – М.: Финансы и статистика, 2005. – 495 с.

բովանդակություն չունի: Նրա կարծիքով, ակտիվի արժեքը պետք է որոշվի այն եկամտի մեծությամբ, որը կարող է ստացվել տվյալ ակտիվի օգտագործումից, անկախ այն բանից, թե ինչ արժեքով է ակտիվը ձեռք բերվել կամ կարող է վաճառվել: Այս տեսանկյունից շահույթի մեծությունը պայմանավորված է ակտիվի եկամտաբերության մակարդակով:

Սակայն ինչպես նշում է Յ.Վ. Սոկոլովը. «ինչպես կապիտալը կարելի է գնահատել շահույթի տեսանկյունից, այնպես էլ շահույթը՝ կապիտալի»: Այս մեկնաբանումը նոր տնտեսական կատեգորիայի՝ **գուղվի**ի առաջացման պատճառ է:

Շահույթին հակառակ ցուցանիշ է համարվում վնասը: Նրա առկայությունը վկայում է ոչ բավարար ֆինանսական արդյունքների/ ցուցանիշների մասին, ինչը միշտ ֆինանսատնտեսական գործունեության ոչ խելամիտ վարման, անտնտեսվարության, տնտեսագիտական ցածր մակարդակի աշխատանքի հետևանք է՝ վնասի դրամային արտահայտությունը, եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցման արդյունքում նյութական և դրամային ռեսուրսների նվազում: Կախված համեմատելի ցուցանիշների մեծությունից, վնասը կարող է հետևյալ երկու հետևանքներից արդյունքը լինել՝ կամ կազմակերպության աստիճանական անցում դեպի լուծարման, կամ էլ արտադրական գործընթացի վերարտադրության համար նախատեսված գումարների նվազում:

Անկախ շահույթի ծագման մասին եղած մեկնաբանություններից՝ բոլոր տեսությունները ներառում են շահույթը առավելագույնին հասցնելու հայեցակարգը, որը դիտարկվում է որպես շարժիչ ուժ շուկայական տնտեսության պայմաններում:

Շահույթի ժամանակակից տեսություններն այդ կատեգորիայի տնտեսագիտական բովանդակության և նրա գոյացման օրինաչափությունների մասին տարբեր մոտեցումներ են առաջարկում: Գոյություն չունի շահույթի մասին միասնական մոտեցում/ըմբռնում և չի էլ կարող լինել, քանի որ այն լիովին կախված է այն նպատակներից/խնդիրներից, որոնք իր առջև դրել է տվյալ շահագրգիռ տնտեսվարող սուբյեկտը:

Այստեղից հետևություն, որ գիտական գրականության մեջ «ֆինանսական արդյունք» տնտեսական կատեգորիան միշտ՝ նախկինում և այսօր էլ, եղել է ուշադրության կենտրոնում:

ՀԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՊՀ ասպիրանտ

ՀԻՓՈԹԵԶԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Կենտրոնացված կառավարման ժամանակներից բնակարանաշինարարությունը եղել է Հայաստանի իշխանությունների ուշադրության կենտրոնում, և սոցիալական այս կարևոր խնդրի լուծման առումով հանրապետությունը գրեթե չի ունեցել որևէ լուրջ դժվարություն: Սակայն հայտնի դեպքերից հետո (երկրաշարժ, տարածաշրջանային կոնֆլիկտներ, փախստականներ, ազատական հարաբերությունների անցման բարդություններ և այլն) հանրապետության համար այն դարձավ առաջնահերթ և հնարավորինս արագ լուծում պահանջող հարց: Ֆինանսական սահմանափակ հնարավորությունների պայմաններում այդպիսի անհետաձգելի հարցի լուծմանն օժանդակող լավագույն տարբերակ պետք է համարել հիփոթեքային վարկավորումը: Այն հանրապետությունում դեռևս ձևավորման փուլում է, ինչն, անշուշտ, ենթադրում է տվյալ բնագավառում կուտակված համաշխարհային փորձի համակողմանի ուսումնասիրություն:

Աշխարհի բազմաթիվ երկրներում հիփոթեքը դարձել է տնտեսության զարգացման հզոր